



ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍԲ

Սիրելի Մխականներ,

Յունուար ՆԱՐԵԿ-ի թիւին մէջ յայտարարւեցաւ ընթացիկ թէ Փետրուար 9, 1998, թուականէն սկսեալ կը դադրիմ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մնայուն Հովուական պաշտօնէն:

Հինգ տարի շարունակ, Աստուծոյ օգնութեամբ, խղճմտօրէն ծառայեցի այս ծուխին: ԾնորՀապարտ եմ որ Սրբոց Նահատակաց ծուխը եղաւ ուրիշ առիթ մը եւս իմ Հովուական փորձառական կեանքիս մէջ:

Առանց տատանումի ընդունեցի այս Հովուական գործը, եւ պարտականութիւն ստանձնեցի Հոգատարելու եկեղեցւոյ Հօտը Հետեւեալ պատճառներով.

1. Որպէս աշակերտը Քրիստոսի, ապաւինեցայ Աստուծոյ զօրութեան եւ օգնութեան տալու այս ծուխին Հոգեւոր առաջնորդութիւն: Հովիւ մը կրնայ յաւատեղեակ եւ փորձառու ըլլալ, սակայն յաջողելու Համար, ան անՀրաժեշտօրէն պէտք ունի Սուրբ Հոգիին առաջնորդութեան եւ նրբնչման: Այս ճամարիտ է նաեւ իւրաքանչիւր ծխականի Համար որ առաջնորդութիւն կը փնտռէ իր Հոգեւոր զարգացման եւ յաջողութեան Համար:

2. Որպէս Հովիւ, յանձն առի այս պարտականութիւնը սիրելով՝ խնամելու ծխականներս: Ուրախ եմ եւ գոհունակ որ ծառայեցի փափաքելով եւ սիրելով: Զախողելու գաղափարը նկատի չառի իմ տարած Զանքերուս մէջ երբ կը կատարէի Հովուական պարտականութիւններս: ՅովՀաննէս առաքեալ կ'ըսէ Հետեւեալը, «Սիրոյ մէջ երկիւղ չկայ. եւ կատարեալ սէրը Հեռու կը վանէ երկիւղը ...» (Ա. ՅովՀաննէս 4:18): Սէրը կը զօրացնէ մարդիկը իրենց ծառայութեան եւ զոհողութեան մէջ, Հակառակ իրենց ունեցած

դժուարութեանց եւ ճախողութեանց: Մառայութեանս ընթացքին Հանդիպեցայ շատ մարդոց, որոնց սրտերը սիրով էին ուրիշներու Հանդէպ: Այդ ծխականները եռանդ տուին ինծի շարունակելու իմ գործս:

3. Գիտէի թէ շատեր պիտի կամենային օգնել ինծի կատարելու ծուխին ծրագիրները: Այդ մարդոց կամեցողութիւնը, բաժնելու Հովուական պարտականութիւններուս բերը, ինձ Համար եղաւ ճամարիտ քաջադերանք: Վստահեցայ մարդոց որոնք պատրաստ էին օգնութեան ձեռք երդոց որոնք կատարաստ էին օգնութեան ձեռք երկարելու ինծի, որովՀետեւ անոնց ներկայութիւնը շատ կարեւոր էր որ ես շարունակէի աշխատիլ: Որպէս մարդկային էակներ, երբեմն կը թույնանք մեր ճիգերուն մէջ, սպասելով որ օգնութեան ձեռք մը յայտնուի մեզի: Պօղոս առաքեալ կը շնչտէ կարեւորութիւնը իրար օգնելու, եւ կ'ըսէ, «Ուստի մխիթարեցէք զիրար եւ Զանացէք մէկը միւսին շինութեան Համար, ինչ որ կ'ընէք արդէն»: (Ա. Թեսաղոնիկեցւոց 5:11): Ինչպէս այս խօսքերը կը յիշեցնեն, ծուխ մը քրիստոնէական ընկերակցութիւն կ'ըլլայ այն ատեն երբ անոր անդամները կը շահագորգուին իրարմով եւ կը քաջալերեն զիրար:

Սրբոց Նահատակաց ծուխին մէջ պաշտօնավարութեանս ընթացքին վերահասու եղայ, թէ որպէսզի կարենամ Հոգ տանիլ ծխականներուս, կարիքը ունէի Աստուծոյ օգնութեան, ծխականներուս Հանդէպ սիրոյն եւ կամեցող օգնականներու: ԾնորՀակալ եմ որ այդ բոլորը ունեցայ:

Ինքզինքս բախտաւոր կը զգամ որ բարի մարդոց Հանդիպեցայ ընդՀանուր Հովական ծառայութեանս ընթացքին: Կարգ մը մարդիկ Հարցուցին ինծի, «Ինչպէ՞ս ծուխ մը կրնայ յաջողիլ»: Թէեւ պարզ, սակայն կարեւոր Հարցում

մըն է: Այս հարցումին սկզբնական պատասխանովս հարց տուի, ըսելով, «Այդ յաջողութիւնը որ կը փնտոէք, ձեր մասնակցութեամբ է թէ առանց ձեր մասնակցութեան»:

Առաջին, պէտք է իմանանք թէ երբ օգնութիւն կ'ընծայենք եկեղեցւոյ կեանքին համար, յաջողութիւն ձեռք կը ձգուի միայն այն ատեն երբ խոչընդոտները կը յաղթահարուին եւ անհամաձայնութիւնները կը փարատին: Յաջողութիւնը կը պահանջէ տեւական աշխատանք եւ կարգապահութիւն: Կարգապահութիւնը մարզանք է որ կը զարգացնէ անհատին ինքնազբսպումը, նկարագիրը, կանոնաւորութիւնը եւ արդիւնագործութիւնը նուազագոյն վատնումով: Երբ կարգապահ չենք, ընդունած չենք յաջողութեան օրէնքները, եւ մեր ձախողութիւնը հաւանական կը դառնայ:

Երկրորդ, շատ լաւ գիտենք թէ երբ դերակատար մը ինքզինք չի պատրաստեր, չի կրնար իր դերը յաջող կերպով կատարել: Ուստի, պատրաստութիւնը՝ դադտնիքն է յաջողութեան: Կարգապահութեամբ եւ պատրաստութեամբ կրնանք ընթանալ մեր առաքելութեան գործին մէջ:

Երրորդ, մեր կեանքին մէջ խնդիրները կը յամառին մնալ այնքան ժամանակ, որքան մենք կը փնտոենք ուրիշ անձեր՝ մեղադրելու զանոնք մեր ձախողութեանց համար, փոխանակ սրբազրելու զանոնք: Այսպիսի կեցուածք մը կը նկատուի հակա-արդիւնաւէտ: Տեսիլք ունեցող մարդիկ պէտք է ընդունին թէ յաջողութիւնը միշտ ենթակայ է կառուցման: Այս կը նշանակէ թէ մենք պէտք է զարգանանք եւ սրբազրենք մեր սխալները եթէ կ'ուզենք յաջողութիւն ձեռք ձգել:

Չորրորդ, իմաստունը եթէ կ'ուզէ յաջողիլ, պէտք է օգտագործէ «ձրի» փորձառութիւն: Երբեմն կը միտինք կապկել ուրիշներու արարքները, նոյնիսկ եթէ անոնք ձախող են: Ձրի փորձառութիւնը այն իմաստութիւնն է որ ձեռք կը բերենք երբ կը գործադրենք այն ինչ որ ձախողած անձ մը զանցառու եղաւ զանոնք կատարելու: Ուրիշներու սխալներէն սորվիլը ճամբան կը հարթէ մեր յաջողութեան:

Վերջապէս, որպէս քրիստոնեաներ, իրազեկ ըլլալու ենք թէ յաջողելու համար պէտք է ճշմարիտ ըլլանք Աստուծոյ հանդէպ եւ Աստուծոյ համար: Երբ կ'ենթարկուինք այս համոզումին, շահողներ կ'ըլլանք առանց երբէք լքելու: Բայց երբ չենք ենթարկուիր այս համոզումին, լքողներ կ'ըլլանք առանց երբէք չահելու:

Երկար տարիներու փորձառութիւն ունեցող ծուխ մը պէտք է ունենայ իր կեանքը զօրացնող լաւ հիմնաւորուած կրօնական եւ մշակութային ծրագիրներ: Այսպիսի ծրագիրներով, երիտասարդութիւնը կրնայ պատրաստուիլ՝ ըլլալու ապագայի առաջնորդները համայնքին: Նման ծրագիրներու բացակայութիւնը նշան է, տկարութեան եւ ձախողութեան, որովհետեւ այդ ծրագիրները կ'արտայայտեն գոյութիւն ունեցող տեսիլքը ծուխի մը: Զօրաւոր ծուխ մը կազմելու աշխատանքին մէջ երբ ծխականներու մօտ կը տիրէ անկարողութիւն, անտարբերութիւն եւ անշահագրգռութիւն, այդ նշան է անձնասպանութեան, որուն համար իրենք են միայն պատասխանատուները:

Երբ մենք հպարտօրէն կը յիշենք մեր անցեալի յաջող գործերը, մենք պէտք չունինք յիշեցումի թէ ի՞նչ պէտք է ընենք այսօր: Գիտենք նաեւ թէ իւրաքանչիւր օր իր հետ կը բերէ նոր մարդիկ եւ նոր առիթներ գործելու մեր եկեղեցիին եւ մեր երիտասարդութեան համար:

Եկեղեցւոյ մատուցած լաւ ծրագիրներու մասին միայն իմանալ եւ զանոնք նկատելը, ինքնին օգտակարութիւն չունին եկեղեցւոյ կեանքին համար երբ չենք մասնակցիր անոնց: Նոյնպէս, օգուտ չունի երբ մենք կը զովենք եկեղեցւոյ ձեռնարկները առանց մեր նպաստը տալու: Բոլորս ալ գիտենք թէ առանց ճիշդ ոչինչ կարելի է իրագործել: Տունկի մը ծաղկումը չենք յաջողիլ տեսնել, երբ հունտը կանոնաւոր չէ ցանուած եւ յարատեւ խնամք չէ տրուած:

Միսական խորհուրդը, բաղկացած ափ մը կամաւոր ծառայողներէ, կը ներկայացնէ ծուխը իր ներկայ գոյութեանը մէջ, բայց ոչ ծուխի մը կարողութիւնները: Մինչդեռ, երբ տկար ծխական խորհուրդ մը կը ներկայացնէ տկար ծուխ մը, չենք կրնար այսպանել ծխական խորհուրդը ծխականներու ունեցած անտարբերութեան կամ անզգայութեան համար:

Դիւրին է վայելել պատրաստի հասոյթը, բայց պէտք է նայիլ թէ մեզմէ իւրաքանչիւրը որքանո՞վ իր մասնակցութիւնը բերած է այդ հասոյթի պատրաստութեան: Ապրանք մը գնելը տարբեր կարողութիւն է, իսկ այդ ապրանքը պատրաստելը՝ ուրիշ կարողութիւն: Ի՞նչ կ'ընենք երբ մեր փափաքած ապրանքը չենք գտներ այլեւս: Թերեւս մենք կը փորձենք հնարել կամ պատրաստել զայն: Ինչո՞ւ չընել նոյնը մեր ծուխին համար: Երբ ունինք գործնական գաղափար մը եւ զայն գործադրող անձեր, լաւագոյն օգտակարութիւնը ըրած կ'ըլլանք երբ

զանոնք ի սպաս կը դնենք մեր ծուխին համար: Բոլորս ալ կրնանք օգտուիլ յաջողակ ծուխէ մը:

Յիշենք թէ ծխական խորհուրդին նպատակն է հսկել, մատակարարել եւ քաջալերել զանազան գործերը ծուխին: Մխական խորհուրդի ամի մը անդամներուն գործը չէ պատասխանատու ըլլալ ծուխի մը բոլոր հարցերուն, ծրագիրներուն եւ գործունէութեանց: Աւելին, երբ ծխական խորհուրդ մը, որոշ արդարացի պատճառներով, անկարող է լրացնել իր պարտականութիւններէն մին, պէտք չէ քննադատուի իր անկարողութեանը համար: Ընդհակառակը, չափազանցուող եւ հմուտ ծխականներ պէտք է բարենտօրէն ընդունին այդ պարագան եւ ընծայեն իրենց փորձառութիւնը ծուխի բարիքին համար:

Այստեղ կրկին անգամ կը մէջբերենք Պօղոս առաքեալի խօսքը, որ կ'ըսէ, «Ուստի մխիթարեցէք զիրար եւ ջանացէք մէկդ միասին շինութեան համար ...» (Ա. Թեսաղոնիկեցւոց 5:11):

40 տարեկան ծուխ մը պէտք է լաւ կազմակերպուած ըլլայ կրօնական եւ մշակութային լաւ ծրագիրներով: Մխական հովիւ մը պէտք է կարող ըլլայ օգնելու որ ծուխը զօրանայ այդ մարզերուն մէջ: Եթէ ծուխ մը լաւ կազմակերպուած է, ան կրնայ զարգանալ ժամանակաւորապէս առանց հովիւի: Իսկ, միւս կողմէ սակայն, երբ անկազմակերպ ծուխ մը երկար ժամանակ կը մնայ առանց հովիւի, այդ ծուխը կը տկարանայ եւ կը ձախողի իր առաքելութեան մէջ: Լաւ կազմակերպուած ծուխ մը կրնայ ինքզինք զարգացնել ընկերային եւ հոգեւոր մարզերուն մէջ իր գոյութեան տարիներու ընթացքին:

Արդարեւ, դժուար է ունենալ յաջողակ ծուխ մը, բայց այդ կը պահանջէ շատ ժամանակ եւ

աշխատանք: Մուխի մը մէջ, յաջողութեան գլխաւոր արգելքներէն մին է հակառակող խմբակներու գոյութիւնը: Այդպիսի պարագաներուն, ոչ մէկ խմբակ կրնայ աւելի լաւ եւ կամ աւելի յաջող ըլլալ միւս խմբակներէն: Երբ չենք սորվիր մեր եւ ուրիշներու սխալներէն եւ կը շարունակենք ունենալ անհասկացողութիւն իրարու նկատմամբ, չենք կրնար նայիլ պայծառ ապագայի, հակառակ մեր պերճախօս ներկայացումին կամ ներկայացուցչութեան:

Յաջողելու համար դրական մօտեցումն է կարող ծխական խորհուրդի եւ ծխականներու համագործակցութիւնը: Մխականներ, անհատաբար, կրնան կարող եւ փորձառու ըլլալ, բայց նպատակները իրագործելու համար խմբային աշխատանք կը պահանջէ: Ուսմբի մը աշխատողներէն կը պահանջուի համբերութիւն, սէր, նկատառում եւ իրենց աշխատակիցներուն ճանաչում եւ կամեցողութիւն մարզելու անփորձները: Այն ինչ որ կը պահանջուի ընտանիքի մը անդամները միացնելու իրենց հաւաքական ջանքերուն մէջ, նոյնը եւս կը պահանջուի մեզմէ որպէս մեծ ընտանիք: Այս իրագործելի է երբ անդամները կը զարգացնեն սէր իրարու նկատմամբ: Առանց սիրոյ ծուխ մը չի կրնար յառաջդիմել, ուր մնաց յաջողիլ:

Ձեր մէջ գտնուիմ եւ կամ ձեզմէ հեռու ըլլամ, եւ կ'աղօթեմ ձեր յաջողութեան համար: Բոլորս պէտք է աղօթենք իրարու համար եւ օգնենք իրարու: Ձեր լաւ յիշատակները պիտի պահեմ մէջս, որովհետեւ անոնք պիտի քաջալերեն զիս եւ զուարթացնեն օրերս:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր բոլորին ձեր օգնութեան եւ հոգատարութեան համար:

Աստուած օրհնէ ձեզ:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԻ. ԱՂՈՅԵԱՆ

(Հովիւ Լոնկ Այլընտ Նիւ Եօրքի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ)